ԱԳԱԹ

Հաշմանդամություն ունեցող կանանց
իրավունքների պաշտպանության կենտրոն

ԳՅՈՒՄՐՈՒ ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

ԱՄՓՈՓԻՉ ՁԵԿՈՒՅՑ

2025

«Գյումրի քաղաքի ընտրական տեղամասերի մատչելիության մշտադիտարկում» ամփոփիչ զեկույց

Մշտադիտարկման ժամանակահատված

Հունվարի 20- Մարտի 6. 2025թ.

Մշտադիտարկումն իրականացնող թիմ և կազմակերպություններ

Իրականացնող կազմակերպություն

«Ագաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն» ՀԿ

Զեկույցի հեղինակ՝ Ռոզա Ավագյան

Ծրագրի հեղինակ՝ Կարինե Գրիգորյան

Տվյալների վերլուծություն՝ Ռոզա Ավագյան
Մարինե Ավետիսյան

Քարտեզագրման և լուսանկարների/փաստերի հավաքագրման պատասխանատու՝
Լենա Հովհաննիսյան

Խմբագիր՝ Գայանե Գրիգորյան

Մշտադիտարկողներ՝ Աննա Ղուկասյան
Միեր Գիշյան

Համագործակցություն

Ընտրական համակարգերի միջազգային հաստատության (IFES) հայաստանյան մասնաճյուղ

Կենտրոնական ընտրական հանձնաժողով՝
Արուսյակ Տերչանյան

Գյումրու համայնքապետարան

Ընտրատարածքային ընտրական թիվ 31 հանձնաժողով

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԵԱՀԿ	Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն
ԸԸՀ	Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով
ԸԿ	Ընտրական կենտրոն
ԸՏ	Ընտրական տեղամաս
ԺՄԻԳ	Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ
ԿԸՀ	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԻԵԿ	Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա
ՄՀ	Մշտադիտարկման հարցեր
Տ Հ	Տեղամասի համար
ՏԸՀ	Տեղամասային ընտրական հանձնաժողով

Բովանդակություն

Ամփոփագիր

Համատեքստ ---------- 4

Մշտադիտարկման նպատակ ---------- 5

Մեթոդաբանություն ---------- 6

Տվյալների մշակում և վերլուծություն ---------- 9

Իրավական կարգավորումներ ---------- 9

Մշտադիտարկման վերլուծություն

Ամփոփ տվյալներ ընտրական տեղամասերի վերաբերյալ ---------- 12

Ավտոբուսի կանգառներ ---------- 13

Ընտրական տեղամասի մուտք ---------- 14

Քվեարկության սենյակ ---------- 16

Սանհանգույց ---------- 18

Եզրակացություն ---------- 19

Առաջարկություններ ---------- 21

Հավելված 1: ԸՏ ցանկ ---------- 25

Ամփոփագիր

Համատեքստ

Սույն զեկույցը ներկայացնում է Շիրակի մարզի Գյումրի քաղաքի 83 ընտրական տեղամասերի մատչելիության մշտադիտարկման արդյունքները: Ըստ պաշտոնական տվյալների Շիրակի մարզում հաշվառված է 17,073 հաշմանդամություն ունեցող անձ: Ժողովրդավարական գործընթացների ամբողջականությունն ու թափանցիկությունը պահանջում են, որ յուրաքանչյուր քաղաքացի, անկախ իր ֆիզիկական կարողություններից, ունենա հավասար հնարավորություն մասնակցելու ընտրություններին:

Սույն մշտադիտարկումը իրականացվել է 2025 թվականին «Ագաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն» ՀԿ-ի կողմից՝ Ընտրական համակարգերի միջազգային հաստատության (IFES) հայաստանյան մասնաճյուղի և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ) հետ համագործակցությամբ: Մշտադիտարկման ընթացքում համագործակցել ենք նաև Գյումրու համայնքապետարանի և ընտրատարածքային ընտրական թիվ 31 հանձնաժողովի հետ:

2019-2021 թվականներին «Ագաթ» ՀԿ-ն՝ Ընտրական համակարգերի միջազգային հաստատության (IFES) հայաստանյան մասնաճյուղի և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ) հետ համագործակցությամբ իրականացրել է ընտրական տեղամասերի մատչելիության համապարփակ մշտադիտարկում՝ ընդգրկելով ՀՀ-ի ընտրական տեղամասերի 99%-ը՝ 1987 ընտրական տեղամաս: (2021 թ. ամբողջական զեկույց): Մշտադիտարկման արդյունքում ի հայտ եկած տվյալների հիման վրա իրականացվել են բազմաթիվ ծրագրեր և բարեփոխումներ՝ ընտրական տեղամասերի մատչելիության բարելավման նպատակով:

Սույն զեկույցը հիմնված է այդ ուսումնասիրության արդյունքների վրա և հնարավորություն է տալիս գնահատել Շիրակի մարզի Գյումրի քաղաքի ընտրական տեղամասերի մատչելիության մակարդակը՝ բացահայտելու առկա խոչընդոտները, ինչպես նաև վերլուծելու, թե որքանով են կյանքի կոչվել նախկինում ներկայացված առաջարկությունները:

Մատչելիության ապահովման առանցքային տարրերն են՝ ֆիզիկական պայմանների բարելավումը (թեքահարթակներ, բռնաձողեր, լայն դռներ, հարթ շեմքեր) և տեղեկատվության մատչելիությունը (բրայլյան գրառումներ, ձայնային ուղեցույցներ, պարզ և մատչելի տեղեկատվություն): Ընտրական տեղամասերի անմատչելիությունը սահմանափակում է որոշ խմբերի ընտրական իրավունքները, ինչը հակասում է ժողովրդավարական սկզբունքներին:
Հետևաբար, ընտրական գործընթացի լիարժեք ներառականությունն ապահովելու համար անհրաժեշտ են համակարգված քաղաքականություն, իրավական կարգավորումներ և գործնական միջոցառումներ, որոնք կերաշխավորեն բոլոր քաղաքացիների հավասար մասնակցությունը՝ առանց խոչընդոտների:
Այս զեկույցը ծառայում է որպես տեղեկատվական հիմք պետական մարմինների, ընտրական հանձնաժողովների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համար՝ ընտրական գործընթացի մատչելիությանբարելավման ուղղությամբ անհրաժեշտ քայլեր սահմանելու համար:
Այն նաև կարող է ծառայել որպես ուղեցույց՝ հետագա բարեփոխումների իրականացման և քաղաքականության մշակման համար:
«Ագաթ» ՀԿ-ի կողմից 2021 և 2025 թթ իրականացրած մշտադիտարկումների տվյալները ներկայացված են ԿԸՀ-ի պաշտոնական կայքում, որի միջոցով քաղաքացիները կարող են նախապես տեղեկանալ ընտրական տեղամասերի մատչելիության վերաբերյալ:
Մշտադիտարկման

Մշտադիտարկման նպատակ

Գյումրի քաղաքի ընտրական տեղամասերի մատչելիության մշտադիտարկման նպատակն է գնահատել, թե որքանով են ընտրական տեղամասերը մատչելի և հարմարեցված բոլոր քաղաքացիների, հատկապես՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար: Մատչելի միջավայրի ապահովումը կարևոր է ոչ միայն հաշմանդամություն ունեցող անձանց, այլև տարեցների, հղի կանանց, շարժունակության խնդիրներ ունեցող կամ ժամանակավոր տեղաշարժման դժվարություն ունեցող քաղաքացիների համար:
Ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս վերհանել հիմնական խոչընդոտները, վերլուծել առկա ենթակառուցվածքները և առաջարկել գործնական լուծումներ՝ ընտրական գործընթացի ներառականությունը բարձրացնելու և ապահովելու համար, որ յուրաքանչյուր քաղաքացի կարողանա առանց դժվարությունների իրացնել իր ընտրական իրավունքը:

Մշտադիտարկման արդյունքները կարող են ծառայել որպես տեղեկատվական հիմք պետական մարմինների, ընտրական հանձնաժողովների և շահագրգիռ կողմերի համար՝ ընտրական գործընթացի ներառականության մակարդակը բարձրացնելու և

բոլոր քաղաքացիների համար հավասար հնարավորություններ ստեղծելու ուղղությամբ:

Մեթոդաբանություն

Մշտադիտարկման գործընթացում կիրառվել է հարցաթերթիկային մեթոդը, որը ներառում է ընտրական տեղամասերի մատչելիության գնահատման չափորոշիչներ՝ հիմնված միջազգային և ազգային չափորոշիչների վրա:

Տվյալների հավաքագրման գործընթաց

- Տվյալների հավաքագրումը կատարվել է առցանց ձևաչափով՝ համապատասխան առցանց հարցաթերթիկի միջոցով:
- Մշտադիտարկողները լրացրել են ձևաթուղթը՝ ըստ իրենց դիտարկած ընտրական տեղամասի:

Մշտադիտարկման բաղադրիչներ

Մշտադիտարկման ընթացքում ուսումնասիրվել են մի շարք բաղադրիչներ, որոնք կարևոր դեր ունեն տեղամասի մատչելիության ապահովման գործում:

Ընտրական տեղամասի հարող տարածք (կայանատեղ)

Գնահատվել է, թե որքանով են ընտրական տեղամասերի հարակից տարածքներում առկա ավտոկայանատեղերը հարմարեցված բոլոր քաղաքացիների, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար: Դիտարկվել է, թե արդյոք նախատեսված են հատուկ կայանատեղեր, որոնք բավարար լայնություն ունեն և տեղակայված են ընտրական տեղամասի մուտքին մոտ: Վերլուծվել է նաև, թե արդյոք կայանատեղին համապատասխանում է մատչելիության չափորոշիչներին, ինչպես օրինակ՝ հատուկ նշանակող նշանների առկայությունը և հարթ, առանց խոչընդոտների մակերեսը:

Ավտոբուսի կանգառ

Ուսումնասիրվել է ընտրական տեղամասի հարակից տարածքում հասարակական տրանսպորտի հասանելիությունը: Գնահատվել է, թե որքանով է ընտրական տեղամասի մոտակայքում առկա ավտոբուսի կանգառ, ինչպես նաև՝ դրա հարմարեցվածությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար: Մասնավորապես դիտարկվել է՝ արդյոք կանգառը հագեցած է տեսողության խնդիրներ ունեցող անձանց համար նախատեսված ուղենիշներով, ներառյալ տակտիլ սալիկներն ու այլ հարմարեցված լուծումները:

Կանգառից տեղամասային կենտրոնի մուտք տանող ճանապարհ, մայթեզր

Մշտադիտարկման ընթացքում ուշադրություն է դարձվել ընտրական տեղամաս տանող ճանապարհի որակին: Դիտարկվել են մայթերի առկայությունն ու դրանց մատչելիությունը: Գնահատվել է մայթեզրի բարձրությունը, հնարավոր խոչընդոտների առկայությունը (ինչպես օրինակ՝ ծառեր, աղբամաններ, անհարթություններ) և թեքահարթակների առկայությունը, որոնք թույլ կտան անխոչընդոտ մուտք գործել ընտրական տեղամաս: Հատկապես ուսումնասիրվել են մայթեզրի թեքահարթակների չափերը, դրանց լայնությունը, թեքության աստիճանը և բռնաձողերի առկայությունը:

Ընտրական տեղամասի մուտք

(ներառյալ աստիճաններ, թեքահարթակ, բռնաձողեր, դուռ, շեմք և այլն)

Գնահատվել է ընտրական տեղամասի մուտքի մատչելիությունը բոլոր ընտրողների համար: Մասնավորապես ուսումնասիրվել են.

- **Աստիճանների առկայությունը**, դրանց բարձրությունը, լայնությունը և համապատասխան գծանշումների առկայությունը,
- **Թեքահարթակների առկայությունը**, դրանց լայնությունն ու թեքության աստիճանը,
- **Բռնաձողերի առկայությունը**՝ աստիճանների կամ թեքահարթակների երկայնքով,
- **Մուտքի դռան չափերը**՝ արդյոք այն բավարար լայնություն ունի անվասայլակ օգտագործողների համար,
- **Շեմքի առկայությունը և բարձրությունը**, ինչը կարող է խոչընդոտ հանդիսանալ տեղաշարժման համար:

Ընտրական տեղամասի շենք

Մշտադիտարկման շրջանակում գնահատվել են ընտրական տեղամասի ամբողջական շենքային պայմանները: Ուսումնասիրվել է՝ արդյոք շենքում առկա են համապատասխան մատչելիության նշաններ, ինչպիսիք են խորհրդանիշերը, բրայլյան գրառումները, տեսողական հարմարեցումները և հատուկ գծանշումները: Վերլուծվել է նաև՝ արդյոք շենքը վերանորոգվել է վերջին տարիներին, ինչը կարող է ազդել դրա մատչելիության վրա:

Քվեարկության սենյակ

Գնահատվել է քվեարկության սենյակի մատչելիությունը, ներառյալ.

- Դռան լայնությունը և շեմքի առկայությունը,
- Ներքին տարածքի հարմարավետությունը և շարժունակության հնարավորությունները,
- Բրայլյան նշանների առկայությունը՝ տեսողության խնդիրներ ունեցող անձանց համար,
- Լուսավորության մակարդակը, որը կարևոր է բոլոր ընտրողների համար:

Սանհանգույց

Դիտարկվել են ընտրական տեղամասերում առկա սանհանգույցները: Գնահատվել է՝

- Դռան լայնությունը՝ արդյոք այն բավարար է անվասայլակով մուտք գործելու համար,
- Հատակի հարթությունը՝ խոչընդոտների բացակայությունը,
- Բռնաձողերի առկայությունը, որոնք անհրաժեշտ են հաշմանդամություն ունեցող անձանց համար,
- Բրայլյան նշումների առկայությունը՝ տեսողության խնդիրներ ունեցող անձանց համար,
- Հարմարեցված սանհանգույցների ընդհանուր չափերը, որոնք պետք է բավարարեն մատչելիության չափորոշիչներին:

Տվյալների մշակում և վերլուծություն

- Հավաքագրված տվյալները ենթարկվել են քանակական և որակական վերլուծության՝ բացահայտելու հիմնական մարտահրավերներն ու խնդիրները:
- Ստացված արդյունքները հատուկ ձևաչափով_ներկայացվել են ԿԸՀ-ին՝ վեբ կայքի մատչելիության քարտեզում տեղադրելու համար:
- Կազմվել է զեկույց:

Իրավական կարգավորումներ

Հաշմանդամություն ունեցող անձանց ընտրական իրավունքի իրացման կարգավորումները սահմանվում են ինչպես **Հայաստանի ազգային օրենսդրությամբ**, այնպես էլ **միջազգային պայմանագրերով և նորմերով**, որոնց Հայաստանը միացել է: Ստորև ներկայացված են հիմնական իրավական փաստաթղթերը, որոնք կարգավորում են հաշմանդամություն ունեցող անձանց ընտրական իրավունքների ապահովումը:

1. Միջազգային կարգավորումներ

1.1 ՄԱԿ-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիա (CRPD)

Հայաստանը 2010 թվականին վավերացրել է այս կոնվենցիան, որի 29-րդ հոդվածը (Մասնակցություն քաղաքական և հասարակական կյանքին) պարտավորեցնում է պետություններին՝ ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց անխոչընդոտ մասնակցությունը ընտրական գործընթացին, ներառյալ՝

- Մատչելի ընտրական տեղամասերի ապահովումը,
- Անձնական և անկախ քվեարկության հնարավորության ընձեռումը,
- Քվեարկության նյութերի մատչելի ձևաչափերի տրամադրումը (բրայլյան գրեր, ձայնային սարքեր և այլն):

1.2 Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա (ՄԻԵԿ)

ՄԻԵԿ-ի 1-ին արձանագրության 3-րդ հոդվածը սահմանում է, որ պետությունները պարտավոր են ապահովել **ազատ ընտրությունների անցկացումը**, ինչը ենթադրում է նաև հաշմանդամություն ունեցող անձանց լիարժեք մասնակցության հնարավորության ստեղծում:

1.3 ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ) ուղեցույցներ

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը շեշտադրում է, որ ընտրական իրավունքի իրացումը պետք է լինի ներառական, և պետությունները պետք է ձեռնարկեն համապատասխան միջոցներ՝ հաշմանդամություն ունեցող անձանց ընտրական իրավունքի երաշխավորման համար:

2. ՀՀ ազգային օրենսդրություն

2.1 ՀՀ Սահմանադրություն

- **ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածը** երաշխավորում է, որ յուրաքանչյուր քաղաքացի ունի ընտրելու և ընտրվելու իրավունք:

2.2 Ընտրական օրենսգիրք

Հոդված 3. Հավասար ընտրական իրավունքը

1. Ընտրողներն ընտրություններին մասնակցում են հավասար հիմունքներով:
2. Հանրային իշխանությունները հավասար պայմաններ են ապահովում ընտրողների ընտրական իրավունքի իրականացման համար:

Հոդված 17.5 Տեղամասային կենտրոնը, քվեարկության սենյակը

Տեղական ինքնակառավարման մարմինները հաշմանդամություն ունեցող ընտրողների ընտրական իրավունքի իրականացման մատչելիությունն ապահովելու համար տեղամասային կենտրոններում ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ:

Հոդված 65.8 Քվեարկության սկիզբը և կարգը

Քվեարկությանը մասնակցելու դժվարություններ ունեցող ընտրողների համար քվեարկությունը մատչելի դարձնելու նպատակով Կենտրոնական ընտրական հանձնաժողովը պարտավոր է սահմանել լրացուցիչ հնարավորություններ՝ ապահովելով քվեարկողի կամքի ազատ արտահայտման հնարավորությունը և քվեարկության գաղտնիությունը:

2.3 «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենք

15.2 Պետությունն ապահովում է հաշմանդամություն ունեցող անձանց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը և աջակցում է դրանց լիակատար իրականացմանը՝ առանց հաշմանդամության հիմքով որևէ խտրականության, միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան: Օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովվում է հաշմանդամություն ունեցող անձանց՝ մյուսների հետ հավասար հիմունքներով, ուղղակիորեն կամ ազատ ընտրված ներկայացուցիչների միջոցով արդյունավետ ու լիարժեք մասնակցությունը քաղաքական ու հասարակական կյանքին, ներառյալ քվեարկելու և ընտրվելու նրանց իրավունքը և հնարավորությունը:Պարտադրում է պետական մարմիններին և ՏԻՄ-երին ապահովել մատչելի միջավայր՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար:

2.4 ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ) որոշումներ

ՀՀ ԿԸՀ-ն ընդունել է մի շարք որոշումներ, որոնք սահմանում են հաշմանդամություն ունեցող անձանց ընտրական իրավունքի իրացման մեխանիզմները, այդ թվում՝

- **N 17-Ն | 24 Մարտ, 2022, որոշում**. Տեղամասային կենտրոնի եվ քվեարկության սենյակի մատչելիության, լուսավորության եվ հանձնաժողովի բնականոն աշխատանքի ապահովման լրացուցիչ պահանջներ սահմանելու եվ տեղամասային կենտրոնների ցանկը ներկայացնելու օրինակելի ձեվը սահմանելու մասին
- **N 11-Ն | 23 Փետրվար, 2022, որոշում**. Տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող ընտրողի կողմից՝ ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից ժամանակավորապես դուրս գալու եվ նախընտրած վայրի մատչելի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընդգրկվելու մասին դիմումի եվ տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող ընտրողի տվյալները՝ ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից ժամանակավորապես հանելու նախընտրած վայրի մատչելի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում լրացնելու մասին տեղեկանքի ձեվերը սահմանելու մասին:

Իրավական ակտերի հղումներ՝

https://www.arlis.am/documentview.aspx?docID=64762

https://www.arlis.am/documentview.aspx?docID=20870

https://www.arlis.am/documentview.aspx?docID=1

https://www.arlis.am/documentview.aspx?docid=152960

https://www.arlis.am/documentview.aspx?docID=73271

https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=161336

https://res.elections.am/images/Decisions/23.02.22/22.11_N_23-02-2022.pdf

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Ամփոփ տվյալներ ընտրական տեղամասերի վերաբերյալ

Ծրագրի շրջանակներում իրականացվել է 83 ընտրական տեղամասերի մատչելիության մշտադիտարկում:

Ընտրական տեղամասերը հիմնականում տեղակայված են դպրոցներում, մանկապարտեզներում, միջին մասնագիտական հաստատություններում, ԲՈՒՀ-երում, մշակութային հաստատություններում, մարզադպրոցներում, քոլեջներում, մասնավոր կամ առևտրային կառույցներում, կայարանի վարչական շենքում, այլ կառույցներում 7: (տես Պատկեր 1)



	Դպրոց/վարժարան/քոլեջ	Մանկապարտեզ	Միջին մասնագիտական հաստատություն	ԲՈՒՀ	Մշակութային հաստատություն	Մարզադպրոց	Մասնավոր տարածք կամ առևտրային կենտրոն	Այլ
Պատկեր 1	38	18	4	3	4	7	2	7

2020 թ.-ից հետո վերանորոգումներ իրականացվել են 16 տեղամասում, մինչդեռ 65-ում փոփոխություններ չեն եղել: Վերանորոգումների մեծ մասը իրականացվել են 2024 թվականին (7 վերանորոգում):

Մատչելի տեղամասային կենտրոններում տեսանելի հատվածում պետք է լինեն մատչելիության խորհրդանիշեր, որոնք ցույց են տալիս, որ շինությունը մատչելի է հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Մշտադիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ ընտրական տեղամասերում դեռևս բացակայում են հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված կարևոր նշումները: Մշտադիտարկողները որևէ տեղամասում չեն հանդիպել հաշմանդամության խորհրդանիշներ, որոնք անհրաժեշտ են մատչելիության ապահովման մասին տեղեկացնելու համար: Բացի այդ, ոչ մեկում չկան բրայլյան գրերով նշումներ:

83 ԸՏ-երից 24-ը ունեն ընդհանուր ֆիզիկական մատչելիություն (որոշ ԸՏ-երի դեպքում հաշվի են առնվել նվազագույն պայմանները, որոնք թույլ կտան հաշմանդամություն ունեցող անձին առանց խոչընդոտների մուտք գործել ԸՏ), 21-ը՝ մասամբ մատչելի են, այս տեղամասերի թեքահարթակները կամ լիովին չեն բավարարում մատչելիության չափորոշիչներին, առկա են կամ հնարավոր է տեղադրել շարժական թեքահարթակներ:

63 տեղամասերում առկա են չհրկիզվող պահարաններ:

Կայանատեղի

Դիտարկվել են մատչելի կայանատեղիի հետևյալ չափորոշիչները. գտնվում է ընտրական տեղամասի մուտքին մոտ վայրում, ունի առնվազն 2,4 մ լայնություն փոքր մարդատար ավտոմեքենաների համար, առնվազն 3,4 մ՝ փոքր երթուղային ավտոբուսների համար: Առկա է մատչելիության միջազգային խորհրդանիշ:



Կայանատեղիներ առկա են Գյումրու 83 ընտրատեղամասերից միայն 54 ԸՏ-երի մոտ, որից միայն 12-ն է համապատասխանում մատչելիության չափորոշիչներին: Մշտադիտարկված կայանատեղիներում առկա չեն եղել հաշմանդամության միջազգային խորհրդանիշներ: (տես Պատկեր 2)

Ավտոբուսի կանգառներ

Ավտոբուսի կանգառների մատչելիությունը դիտարկվել է հետևյալ չափորոշիչներով՝ հարթ տարածք, թեքահարթակի առկայություն, նվազագույնը 90 սմ լայնությամբ, առանց խոչընդոտների մայթեզր, տակտիլ սալիկների և բրալյան նշումների առկայություն:

Մայթեզրի ցածրացված հատվածը/թեքահարթակը/ մատչելի է անվասայլակով կամ քայլակով տեղաշարժվող անձի համար, եթե այն համահարթեցված է փողոցի հետ, ունի զրոյական կամ մինչև 5 սմ ելուստ և 90սմ լայնություն:



83 ընտրատեղամասից միայն 44 ընտրական տեղամասերի մոտ կան ավտոբուսի կանգառներ, մնացած տեղամասերի մոտ կանգառներ չկան: Կանգառներից 27-ը որոշակիորեն մատչելի են ֆիզիկական հաշմանդամություն ունեցող անձանց համար, 7-ը՝ նաև տեսողության: (Պատկեր 3)

Պատկեր 3

Ընտրական տեղամասի մուտք

ԸՏ մուտքի մատչելիությունը դիտարկվել է հետևյալ չափորոշիչներով.

1. **Հարթ մուտք** ՝ առանց աստիճանների կամ թեքահարթակի առկայություն:
2. **Թեքահարթակների չափորոշիչներ՝**
   - Թեքահարթակը չպետք է գերազանցի 1:12 հարաբերությունը, ինչը նշանակում է, որ յուրաքանչյուր 1 միավոր բարձրություն պետք է լինի 12 միավոր երկարություն: Այդ դեպքում, թեքահարթակի թեքության անկյունը մոտավորապես 4.8° է, իսկ լայնությունը՝ առնվազն 90 սմ:
   - Պետք է ունենա կրկնակի բռնաձողեր 70-90 սմ բարձրությամբ:
   - Անկյունը պետք է լինի 10°–12°, իսկ լայնությունը՝ առնվազն 90 սմ:
   - Պետք է ունենա կրկնակի բռնաձողեր (70-90 սմ բարձրությամբ):
   - Եթե թեքահարթակը երկար է 9 մետրից, պետք է ունենա հարթակներ հանգստանալու համար:
   - Որոշ դեպքերում կարելի է տեղադրել վերելակ կամ վերհան սարք

3. **Դռներ**
   - Դռան լայնությունը պետք է լինի **առնվազն 90 սմ**:
   - Շեմք՝ առնվազն **5 սմ** բարձրություն:

4. **Տեսողական մատչելիություն**
   - **Տակտիլ ուղիներ**՝ շարժման ուղղությունը ցույց տալու համար:
   - **Բրայլյան նշաններ**՝ դռների, կոճակների, ցուցանակների վրա:
   - Կամ առնվազն հարթ տարածք և ազատ տեղաշարժվելու հնարավորություն:

Հետազոտության տվյալները ցույց են տալիս, որ 71 (87%) ընտրատեղամասի մուտքի մոտ առկա են աստիճաններ, ինչը խոչընդոտ է հաշմանդամություն ունեցող անձանց համար: Ընտրատեղամասերի աստիճանների միայն 12-ի կողքին են առկա բռնաձողեր, որոնցից 7-ն ունեն բռնաձող միայն մեկ կողմում, իսկ 5-ը՝ երկու կողմերում: Մնացած տեղամասերում բռնաձողեր բացակայում են: Առկա բռնաձողերից միայն 9-ն են համապատասխանում 90 սմ բարձրության չափորոշիչին, մինչդեռ 3-ի բարձրությունը չի համապատասխանում միջազգային չափորոշիչներին: (Պատկեր 4)



Պատկեր 4

Թեքահարթակներ առկա են 40 տեղամասում, որոնցից 37-ը անշարժ են, 3-ը՝շարժական: Թեքահարթակներից 25-ը համարվել են մատչելի (ոչ բոլոր չափորոշիչներով, այս դեպում առնվազն հաշվի են առնվել լայնությունը և թեքության աստիճանը): Նշված թեքահարթակներից միայն 21-ի մոտ է առկա բռնաձող:



Դռան շեմքի մատչելիությունը հաջորդ քայլն է դեպի ԸՏ, միայն 25 ընտրատեղամասերում է դռան շեմքը հարթ (մինչև 5 սմ), մինչդեռ 58-ում շեմքի բարձրությունը գերազանցում է 5 սմ-ը, ինչը լրացուցիչ դժվարություններ է առաջացնում սայլակով տեղաշարժվող անձանց համար: (Պատկեր 5)

11 ընտրական տեղամասեր ունեն այլընտրանքային մատչելի մուտք, որով կարելի է հասնել քվեարկության սենյակ:

Ըստ մշտադիտարկման արդյունքների 83 ԸՏ-երից 40-ը (48%) ունեն մատչելի մուտք սայլակով տեղաշարժվող անձանց համար, 31-ը՝ տեսողության խնդիրներ ունեցող անձանց համար (հարթ և անխոչընդոտ տեղաշարժման հնարավորություն) և միայն 2 ԸՏ-երի մոտ եղել են տակտիլ կամ ուղղորդող սալիկներ կամ դեղին ժապավեններ:

Քվեարկության սենյակ

Մշտադիտարկվել են քվեարկության սենյակի մատչելիության հետևյալ չափորոշիչները.

- Դռան լայնությունը պետք է լինի առնվազն 90 սմ:
- Մուտքի շեմքը չպետք է գերազանցի 3սմ բարձրությունը:
- Եթե կան աստիճաններ, ապա պետք է լինի թեքահարթակ կամ վերելակ:
- Բավարար տարածք, բայց ոչ պակաս քան 30 ք.մ:
- Բավարար բնական և արհեստական լուսավորություն:
- Տակտիլ ուղիներ, բրալյան նշումներ՝ տեսողության խնդիրներ ունեցող անձանց ուղղորդելու համար:

Քվեարկության սենյակների մատչելիությունը տարբեր ընտրատեղամասերում տարբեր մակարդակների է: Մշտադիտարկման արդյունքներով 81 տեղամասում քվեարկության սենյակները տեղակայված են առաջին հարկում, ինչը դրական ազդեցություն ունի ֆիզիկական մատչելիության վրա, միայն 1 քվեասենյակ նկուղային հարկում է, մյուսը երկրորդ:
Քվեասենյակների մեծ մասը՝ 90%-ը, համապատասխանում են տարածքի չափորոշիչներին, ապահովելով անհրաժեշտ ազատ տարածություն ընտրողների համար: Սակայն 31/32, 31/12 և 31/69 ընտրասենյակները չափերով փոքր են, ինչը կարող է դժվարություններ ստեղծել տեղաշարժման համար:
Մուտքի մատչելիությունը ևս տարբեր է. 40 տեղամասում քվեասենյակի շեմքը հարթ է կամ մինչև 3 սմ բարձրությամբ, ինչը հիմնականում թույլ է տալիս անվասայլակով անձանց մուտք գործել: Սակայն 38 տեղամասերում շեմքը ավելի բարձր է, ինչը կարող է լրացուցիչ խոչընդոտ ստեղծել:
Ֆիզիկական հաշմանդամություն ունեցող անձանց համար ամբողջությամբ մատչելի է 33 քվեասենյակ, իսկ տեսողության խնդիրներ ունեցող անձանց համար 78-ը համարվում են մասամբ մատչելի: Չնայած բնական և արհեստական լուսավորությունը բավարար է, այս տեղամասերում բացակայում են բրայլյան նշումները, տակտիլ ուղիները, ձայնային ազդանշանները, ինչը կարող է սահմանափակել տեսողության խնդիրներ ունեցող անձանց ինքնուրույն կողմնորոշման հնարավորությունը: Այս տվյալները ցույց են տալիս, որ թեև որոշակի առաջընթաց կա քվեարկության սենյակների մատչելիության ապահովման հարցում, դեռևս անհրաժեշտ են լրացուցիչ միջոցառումներ՝ դրանք ամբողջությամբ համընդհանուր մատչելի դարձնելու համար:

Կան քվեարկության սենյակներ, որոնց ճանապարհին առկա են տարբեր տեսակի խոչընդոտներ, որոնք կարող են դժվարացնել հաշմանդամություն ունեցող անձանց մուտքը, օրինակ.



Աստիճաններ՝ մի շարք ընտրատեղամասերում մուտքի մոտ առկա են աստիճաններ, որոնք լրացուցիչ խոչընդոտ են ստեղծում:

Բարձր շեմեր՝ որոշ տեղերում շեմքի բարձրությունը 4 սմ-ից մինչև 8 սմ է, ինչը բարդացնում է անվասայլակով կամ տեղաշարժման խնդիրներ ունեցող անձանց անցումը:

Շարժական թեքահարթակներ՝ առկա են որոշ տեղերում, սակայն դրանց օգտագործման հարմարավետությունը կարող է կախված լինել տեղանքի պայմաններից:

Նեղ դռներ՝ որոշ ընտրատեղամասերում դռան լայնությունը 80 սմ է, ինչը կարող է սահմանափակել լայն անվասայլակների անցումը:

Գորգեր՝ որոշ տեղերում առկա են գորգեր, որոնք կարող են լինել սայթաքելու կամ անվասայլակի տեղաշարժի խոչընդոտ:

Սանհանգույց

Սանհանգույցի մատչելության գնահատման համար դիտարկվել են հետևյալ չափորոշիչները.

- Դռան լայնությունը պետք է լինի առնվազն **90 սմ**:
- Շեմքը պետք է լինի **հարթ կամ ոչ ավելի, քան 3 սմ բարձրությամբ**:
- Դուռը պետք է բացվի հեշտությամբ (նախընտրելի է՝ դեպի դուրս կամ սահող դռներ):
- Պետք է տեղադրված լինեն **մատչելիության նշաններ**, ներառյալ հաշմանդամության միջազգային խորհրդանիշը, բրալյան նշումներ:
- Սայլակով տեղաշարժվելու համար պետք է լինի առնվազն **150 սմ × 150 սմ ազատ տարածք**:
- **Կողային բռնաձողեր** պետք է տեղադրված լինեն 70-75 սմ բարձրության վրա:

Մշտադիտարկման տվյալներով, 75 ընտրատեղամասում սանհանգույցը գտնվում է քվեարկության սենյակի հետ նույն հարկում: Այդուհանդերձ, 70 ընտրատեղամասում սանհանգույցները չեն համապատասխանում մատչելիության չափորոշիչներին: Այս սանհանգույցները չունեն այն անհրաժեշտ հարմարությունները, որոնք կդարձնեին դրանք հասանելի բոլոր քաղաքացիների համար, հատկապես շարժողական խնդիրներ ունեցող անձանց համար:
Մինչդեռ, 11 տեղամասի սանհանգույցները կարող են համարվել մասամբ մատչելի, քանի որ դրանք որոշակի չափորոշիչներ ապահովում են, սակայն չեն հասնում ամբողջական մատչելիության մակարդակին: Օրինակ, որոշ սանհանգույցներում կա լայն դուռ, բավարար տարածք և հարթ շեմք, որոնք նպաստում են տեղաշարժին, սակայն միայն 2 սանհանգույցներում տեղադրված են բռնաձողեր, որոնք անհրաժեշտ են անվտանգության ապահովման և ինքնուրույնության համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ժամանակային սահմանափակումների պատճառով հնարավոր չի եղել խորը համեմատական վերլուծություն իրականացնել 2021 և 2025 թվականներին մշտադիտարկված Գյումրի քաղաքի ընտրական տեղամասերի միջև: Այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ այս տարիների ընթացքում «Ագաթ» ՀԿ-ի կողմից իրականացվել են այլ ծրագրեր և մատչելիության տեսանկյունից դիտարկվել են տարբեր կառույցներ, նաև մակերեսային համեմատականներ իրականացնելով, կարելի է նշել, որ մինչև 2025 թվականը Գյումրիում և Ծիրակի մարզում որոշակի բարելավումներ կատարվել են: Մասնավորապես, 2021թ.-ին ներկայացված առաջարկությունների հիման վրա իրականացվել են փոփոխություններ, ինչպիսիք են՝ անշարժ և շարժական թեքահարթակների տեղադրումը, մուտքի դռների փոփոխությունը, անմատչելի տեղամասերի փոխարինումը այլ տեղամասերով, 2-րդ կամ նկուղային հարկերից տեղափոխումը առաջին հարկ և այլ հարմարեցումներ:

Մշտադիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ Գյումրի քաղաքի 83 ընտրական տեղամասերի մեծ մասը դեռևս չեն համապատասխանում մատչելիության չափորոշիչներին: Ընտրական տեղամասերը հիմնականում տեղակայված են հանրային հաստատություններում, ինչպիսիք են դպրոցները, մանկապարտեզները, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունները, մշակութային կենտրոնները, մարզադպրոցները, ինչպես նաև մասնավոր կամ առևտրային կառույցները: Այս պատճառով մատչելի միջավայրի ապահովումը կարևոր է ոչ միայն հաշմանդամություն ունեցող ընտրողների, այլ նաև տվյալ հաստատություն հաճախող կամ հաստատության ծառայություններից օգտվող հաշմանդամություն ունեցող անձանց կամ երեխաների, տարեցների, հղի կանանց, ժամանակավոր և մշտական տեղաշարժման դժվարություն ունեցող անձանց համար՝ ապահովելով նրանց լիարժեք մասնակցությունը ընտրական բոլոր գործընթացներում՝ որպես ընտրող, հանձնաժողովի անդամ, դիտորդ, լիազորված անձ և այլն:

Չնայած որոշ ընտրատեղամասերում իրականացվել են վերանորոգումներ կամ բարեկարգումներ, ընդհանուր առմամբ ընտրական գործընթացի համընդհանուր մատչելիությունը դեռևս բարելավման կարիք ունի:

Հիմնական խնդիրները ներառում են՝

- **Մուտքի անմատչելիություն**. 71 ընտրատեղամասերում մուտքի մոտ առկա են աստիճաններ, իսկ թեքահարթակներ տեղադրված են միայն 40-ում, որոնց որոշ մասը չեն համապատասխանում չափորոշիչներին:
- **Տեսողական մատչելիության բացակայություն**. Տակտիլ սալիկներ և ուղիներ, բրայլյան նշաններ ընտրական տեղամասերում առկա չեն:

- **Քվեարկության սենյակների անհարմարություններ**. Որոշ տեղամասերում առկա են նեղ մուտքեր, բարձր շեմքեր, ինչպես նաև տեղաշարժման խոչընդոտներ:
- **Սանհանգույցների անմատչելիություն**. 83 ընտրատեղամասերից միայն 11-ի սանհանգույցներն են համեմատաբար մատչելի:
- **Հասարակական տրանսպորտի մատչելիության խնդիրներ**. 83 ընտրատեղամասից միայն 44-ի մոտ կան ավտոբուսի կանգառներ, սակայն դրանցից միայն 27-ն են որոշակիորեն հարմարեցված հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Այս խնդիրները հանգեցնում են նրան, որ հաշմանդամություն ունեցող անձինք, տարեցները և շարժունակության խնդիրներ ունեցող քաղաքացիները սահմանափակ հնարավորություն ունեն ընտրական գործընթացներին մասնակցելու համար:

Իրավական կարգավորումների խնդիրներ

Չնայած ՀՀ Սահմանադրությունն ու ընտրական օրենսգիրքը հստակ սահմանում են բոլոր քաղաքացիների ընտրական իրավունքը, պրակտիկայում մատչելիության ապահովման հստակ մեխանիզմները դեռևս կատարելագործման կարիք ունեն: Թեև ընդհանուր առմամբ բարեփոխումներ իրականացվում են, ԿԸՀ-ի որոշումների վերահսկողության գործընթացը կարող է ավելի արդյունավետ լինել, իսկ որոշ տեղամասերում մատչելիության բարելավման ուղղությամբ անհրաժեշտ է լրացուցիչ աշխատանք իրականացնել:

Մշտադիտարկման և պետական քաղաքականության համակարգված մոտեցման անհրաժեշտություն

Ընտրական տեղամասերի մատչելիության բարելավման համար անհրաժեշտ է համակարգված և պետական մակարդակով վերահսկվող քաղաքականություն, որը կներառի իրավական բարեփոխումներ, ֆիզիկական մատչելիության ապահովում և շարունակական մշտադիտարկում:

Հաշմանդամություն ունեցող անձանց ընտրական մասնակցության իրավունքը դեռևս բախվում է որոշակի դժվարությունների

Մատչելի միջավայրի առկայությունը դրական է ազդում ոչ միայն հաշմանդամություն ունեցող անձանց, այլև տարեցների, հղի կանանց, ժամանակավոր և մշտական տեղաշարժման խնդիրներ ունեցող քաղաքացիների վրա:

- Հաշմանդամություն ունեցող անձանց մի մասը դժվարանում է ինքնուրույն մուտք գործել ընտրատեղամաս, ինչը կարող է սահմանափակել նրանց ընտրական մասնակցությունը:
- Տեսողության խնդիրներ ունեցող ընտրողների համար բրայլյան նշումների կամ ձայնային ուղեցույցների բացակայությունը կարող է դժվարություններ ստեղծել՝ ազդելով նրանց ընտրական ինքնուրույնության վրա:
- Ընտրական հանձնաժողովների անդամների պատրաստվածությունն ու տեղեկացվածությունն առկա կարիքների վերաբերյալ կարող են դեռևս լինել ոչ բավարար, ինչը երբեմն լրացուցիչ դժվարություններ է առաջացնում քվեարկության ընթացքում:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝

ԸՍՏ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ

Ընտրական գործընթացի մատչելիության բարելավումը պահանջում է համակարգված մոտեցում և բազմակողմանի համագործակցություն: Այս առաջարկությունների փաթեթը մշակվել է՝ հիմք ընդունելով մշտադիտարկման արդյունքները և մատչելիության չափորոշիչները:
Առաջարկությունները նպատակ ունեն ապահովելու, որ բոլոր քաղաքացիները, անկախ իրենց ֆիզիկական և մտավոր կարողություններից, հնարավորություն ունենան առանց խոչընդոտների մասնակցելու ընտրական գործընթացներին: Պատկան մարմինների համատեղ ջանքերի շնորհիվ հնարավոր կլինի ապահովել իրավահավասար ընտրական գործընթաց, որտեղ յուրաքանչյուր քաղաքացի կկարողանա իրացնել իր սահմանադրական իրավունքը:
Ըստ ներկայացված մշտադիտարկման արդյունքների առաջարկվում են հետևյալ բարեփոխումները, որոնց իրականացումը կնպաստի ոչ միայն հաշմանդամություն ունեցող անձանց, այլև ամբողջ ընտրական գործընթացի ներառականության բարձրացմանը, ինչը կարևոր քայլ է ժողովրդավարական արժեքների ամրապնդման համար:

Կառավարություն, Ազգային ժողով, Կենտրոնական ընտրական հանձնաժողով (ԿԸՀ)

- Ապահովել, որ պետական բյուջեից հատկացվող միջոցներն ուղղվեն ոչ միայն ընդհանուր վերանորոգման, այլև հատուկ մատչելիության խնդիրների լուծմանը:
- Ընդունել օրենսդրական բարեփոխումներ, որոնք պարտադիր կդարձնեն ընտրատեղամասերի մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար: Օրինակ շինարարական նորմերի խախտումների համար սահմանել վարչական պատասխանատվություն և խրախուսման մեխանիզմներ նրանց համար, ովքեր ապահովում են մատչելի միջավայրի ստեղծումը:

- Ապահովել պետական ֆինանսավորում ընտրատեղամասերի մատչելիության ապահովման համար:
- Մշակել հեռավար կամ այլընտրանքային քվեարկության մեխանիզմներ՝ ֆիզիկական մասնակցության խնդիրներ ունեցող անձանց համար:
- Ստեղծել վերահսկողական մեխանիզմներ, որոնք կապահովեն, որ մատչելիության պահանջները պահպանվեն շինարարական ընկերությունների կողմից:

Ընտրությունների ժամանակ ներգրավել հատուկ պատրաստված անկախ կամավորներ, որոնք կաջակցեն հաշմանդամություն ունեցող անձանց տեղամասերում:

Կենտրոնական ընտրական հանձնաժողով (ԿԸՀ) և Տեղամասային ընտրական հանձնաժողովներ (ՏԸՀ)

- Շարունակել ապահովել, որ ընտրատեղամասերի ընտրության և հաստատման փուլում հաստատուն կերպով կիրառվեն մատչելիության չափորոշիչները՝ կանխելով անմատչելի վայրերում տեղամասերի կազմակերպումը:
- Մշակել և ուժեղացնել մշտադիտարկման մեխանիզմները, որոնք կգնահատեն ընտրական գործընթացի մատչելիությունը նախքան յուրաքանչյուր ընտրություն, նպաստելով շարունակական բարելավմանը:

Տեղական ինքնակառավարման մարմիններ

- Տարեկան բյուջեյում պարտադիր ներառել ֆինանսական ռեսուրսներ և ապահովել, որ համայնքային ենթակայության տակ գտնվող ընտրատեղամասերը վերանորոգվեն և համապատասխանեցվեն մատչելիության պահանջներին:
- Համայնքային մակարդակում իրականացնել հաշմանդամություն ունեցող ընտրողների կարիքների գնահատում և համապատասխան արձագանքել:
- Մշակել և ներդնել չափորոշիչներ հասարակական տրանսպորտային միջոցների մատչելիության համար, ներառյալ ցածր հատակով և բացվող հարթակով մատչելի տրանսպորտային միջոցներ, հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված մատչելի կանգառներ՝ տրանսպորտային հանգույցներում ապահովելով հարմարեցված թեքահարթակներ, ազդանշանային համակարգեր, հատուկ ուղենշումներ:
- Մշակել միասնական չափորոշիչ՝ մայթերի վրա խոչընդոտների վերացման համար:
- Բոլոր հասարակական վայրերում ապահովել պարզ և հստակ նշաններ՝ ինչպես տեսողական, այնպես էլ ձայնային և շոշափելի տարբերակներով (օրինակ՝ բրայլյան գրեր, տակտիլ սալիկներ, գոգավոր դեղին ժապավեններ, և այլն):

Հասարակական կազմակերպություններ (ՀԿ-ներ) և միջազգային գործընկերներ

- Հասարակական կազմակերպությունները և դիտորդական խմբերը պետք է շարունակեն իրենց վերահսկողությունն ու փաստահավաք գործունեությունը, որպեսզի հնարավոր լինի արձանագրել առաջընթացը և բացահայտել մնացած խնդիրները:
- Իրականացնել իրազեկման արշավներ և հզորացման ծրագրեր, որոնք կխրախուսեն հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունը ընտրական գործընթացներին:
- Մշակել ուսուցողական ծրագրեր, որոնք կբարձրացնեն մատչելիության խնդիրների մասին իրազեկվածությունը և կնպաստեն նորարարական լուծումների ներդրմանը:
- Աջակցել պետական կառույցներին խորհրդատվությամբ և վերապատրաստումներով՝ հաշմանդամություն ունեցող անձանց կարիքները հասկանալու և բավարարելու համար:
- Միջազգային գործընկերների միջոցով ներգրավել ֆինանսավորում՝ մատչելիության բարելավման համար:

Մեդիա և հանրային իրազեկման հարթակներ

- Ապահովել, որ ընտրությունների վերաբերյալ հաղորդագրությունները լինեն մատչելի բոլորի համար, ներառյալ ձայնային, տեսողական և պարզ լեզվով տարբերակները:
- Մամուլի միջոցով հանրությանը տեղեկացնել ընտրական տեղամասերի մատչելիության մասին, ինչպես նաև մատչելի տեղամասերի ցանկերը ներկայացնել:
- Կազմակերպել հանրային քննարկումներ, որտեղ հաշմանդամություն ունեցող անձինք և ընտրական պաշտոնյաները կարող են կիսվել իրենց փորձով:

Շինարարական և քաղաքաշինության պատասխանատու մարմիններ

- Վերանայել և խստացնել մատչելիության վերաբերյալ շինարարական նորմերը, ապահովելով դրանց պարտադիր կիրառումը նորակառույց և վերակառուցվող շինությունների համար, ապահովել ընտրատեղամասերի ճարտարապետական մատչելիությունը, ներառյալ թեքահարթակները, լայն դռները, բռնաձողերը, մատչելի սանհանգույցները:
- Ներդնել նորարարական տեխնոլոգիաներ, ինչպիսիք են խելացի վերելակները, ավտոմատ դռները և թվային նավիգացիոն համակարգերը, որոնք կհեշտացնեն հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժը:
- Նպաստել «Համընդհանուր դիզայն» մոտեցման ներդրմանը, որպեսզի հասարակական տարածքները մատչելի լինեն բոլորի համար:

Համընդհանուր դիզայնը ենթադրում է միջավայրի, ենթակառուցվածքների, արտադրանքի և ծառայությունների նախագծում այնպես, որ դրանք լինեն մատչելի, հասանելի, օգտագործելի և հարմարավետ բոլորի համար, առանց լրացուցիչ հարմարեցումների անհրաժեշտության: Օրինակ՝ ձեռքով բացվող ծանր դռների փոխարեն սենսորային կամ ճնշումով աշխատող դռներ, բացվող դռներ:

- Բոլոր կառույցներում ապահովել թեքահարթակներ, որոնք կբավարարեն չափորոշիչներին (թեքության աստիճան, լայնություն, բռնաձողեր):
- Մուտքերի շեմքերը դարձնել հարթ կամ նվազեցնել դրանք առավելագույնը 3 սմ-ի:
- Բոլոր ընտրատեղամասերում ապահովել լայն դռներ (առնվազն 90 սմ)՝ անվասայլակով անցման համար:
- Ընտրատեղամասերի շինարարության կամ վերանորոգման ժամանակ կիրառել մատչելիության չափորոշիչներ:
- Տեղեկատու նշանները և նշագծումները կատարել հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի ձևաչափով:

ՀԱՎԵԼՎԱԾ

ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԻ ՑԱՆԿ

Մատչելի մուտք ունեցող ԸՏ-ների ցանկ

ՏԸՀ	ՏՀ	Հասցե	Տեղամասային կենտրոնի գտնվելու վայրը
31	02	Պ. Սևակի 4	Ծիրակի պետական համալսարան-1
31	03	Պ. Սևակի 4	Ծիրակի պետական համալսարան-2
31	04	Ա. Խաչատրյան 27	Թիվ 11 հիմնական դպրոց
31	07	Չարենցի 5	Անի մանկապարտեզ
31	09	Անի թղմ. 11փ, 5/2	Թիվ 4 արհեստագործական ուսումնարան
31	10	Ֆ. Վերֆելի 4	Թիվ 40 հիմնական դպրոց
31	13	Մուշ 2 թաղամաս	թիվ 23 դպրոց
31	18	Բուլվարային 3	Թիվ 38 հիմնական դպրոց
31	35	Կոշտոյան 5	Նանուլիկ մանկապարտեզ
31	38	Վ. Սարգսյան 13	Թիվ 19 հիմնական դպրոց
31	40	Եսայան 34 Ա	Թիվ 15 հիմնական դպրոց
31	49	Շահումյան 296	Սուրբ Մարիամ մանկապարտեզի շենք
31	51	Լիսինյան 6	Թիվ 8 հիմնական դպրոց
31	57	Կոմինտերնի 1	Թիվ 32 Հիմնական դպրոց
31	58	Կոմինտերնի 1	Թիվ 32 Հիմնական դպրոց
31	60	Մ. Թետչերի փ. 1	Թիվ 20 դ, պրոցի շենք, Մ Թետչերի փ. 1
31	62	Խրիմյան Հայրիկ 1 թաղամաս 56	Թիվ 31 դպրոց
31	63	Խանջյան 29	Թիվ 29 հիմնական դպրոց
31	68	Ղանդիլյանի անվ հրապարակ	Երկաթգծի վարչական շենք 2
31	70	Գարեգին Ա 6/16	Թիվ 27 միջնակարգ դպրոց

31	72	Պուշկինի 101	Թիվ 25 հիմնական դպրոց
31	74	Ա. Սպանդարյան 84	Գեղարվեստի ուսումնարանի շենք
31	76	Լազոյի 2	Թիվ 18 միջնակարգ դպրոց
31	79	Երևանյան խճուղի 91	Թիվ 28 հիմնական դպրոց

Մասամբ մատչելի մուտք ունեցող ԸՏ-ների ցանկ

Մասամբ մատչելի մուտք ունեն 21 ԸՏ, որոնց թեքահարթակները կամ լիովին չեն բավարարում չափորոշիչներին, կամ հնարավոր է տեղադրել շարժական թեքահարթակներ:

ՏԸՀ	ՏՀ	Հասցե	Տեղամասային կենտրոնի գտնվելու վայրը
31	06	Չարենցի 4	Թիվ 41 հիմնական դպրոց
31	11	Չարենցի12	«Ֆոտոն» վարժարան
31	17	Թիվ 8 զինվորական թաղամասի 10 շենք	Սրճարան
31	20	Շիրակացի 10	Ֆ.Նանսենի անվան երեխաներ խնամքի թիվ 2 ՊՈԱԿ
31	27	Շիրակացի 5	Շիրակի պետական համալսարանի մասնաշենք
31	30	Մ. Մկրտչյան 2	ՊԾՀ -ի Գյումրու մասնաճյուղ
31	32	Շչեդրինի 7	Թիվ 30 հիմնական դպրոց
31	33	Գոգոլի 46Ա	Աշխատանքային ռեզերվներ ՄՀԿ
31	34	Շչերբինայի 8	Ժպիտ մանկապաչտեզ
31	37	Անտառավան 4-րդ թաղամաս 30	Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ
31	39	Վ Սարգսյան 20	Լիլիթ մանկապարտեզ
31	42	Ալեք Մանուկյան 4	Թիվ 7 հիմնական դպրոց
31	50	Լիսինյան 12	Խ. Ավետիսյանի անվան թիվ 7 երաժշտական դպրոց
31	54	Տիգրան Մեծի 29	Գյումրու պետական տեխնիկական քոքեջ
31	55	Ղանդիլյան փողոց 1 փակուղի 1	Ա. Տիգրանյանի անվան թիվ 3 երաժշտական դպրոց

31		59	Խրիմյան հայրիկ 1 թաղամաս	Հենզել և Գրետել մանկապարտեզ
31		66	Ղանդիլյանի անվ. հրապ.	Երկաթգծի վարչական շենք 1
1		71	Թումանյան85	Ծիրակի պետական համալսարանի ավագ դպրոցի շենք
31		77	Լազոյի փողոց 1	Արևիկ մանկապարտեզի շենք
31		81	Այգաբաց թաղ, 3 շարք 36	Թիվ 45 դպրոց
31		82	Արևելյան 4/3	Լավաշի չգործող արտադրամաս

Այլընտրանքային մատչելի մուտք ունեցող ԸՏ-ներ

ՏԸՀ	Տ Հ	Հասցե	Անվանում
31	32	Ծչեդրինի 7	Թիվ 30 հիմնական դպրոց
31	73	Թումանյան85	Ծիրակի պետական համալսարանի ավագ դպրոցի շենք-2
31	34	Ծչերբինայի 8	Ժպիտ մանկապաչտեզ
31	78	Փանյան1/2	«Բռնցքամարտի մանկապատանեկան մարզադպրոց»
31	66	Ղանդիլյանի անվ. հրապ.	Երկաթգծի վարչական շենք 1
31	68	Ղանդիլյանի անվ հրապարակ	Երկաթգծի վարչական շենք 2
31	02	Պ. ՍևԱԿԻ 4	Ծիրակի պետական համալսարան-1
31	03	Պ. Սևակի4	Ծիրակի պետական համալսարան-2
31	01	Ա. Խաչատրյան 27	«Հուսո առագաստ» մանկապարտեզ
31	14	Մուշ-2 թաղամաս	Թիվ 23 միջնակարգ դպրոց

Քվեարկության սենյակներ, որոնց ճանապարհին արգելքներ, խոչընդոտներ կան

ՏԸՀ	Տ Հ	Հասցե	Անվանում	Արգելք, խոչընդոտ
31	26	Մնջոյան 204	Փարոս մսուր մանկապարտեզ	Այլ դուռ 80 սմ լայնությամբ և 4 սմ բարձրությամբ շեմք
31	21	Կամոյի 173	Գյումրու N 4 հիմնական դպրոց	Աստիճաններ
31	71	Թումանյան85	Շիրակի պետական համալսարանի ավագ դպրոցի շենք	Աստիճաններ
31	19	Բուլվարային փողոց, 10 Ա	Օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ	Աստիճաններ
31	54	Տիգրան Մեծի 29	Գյումրու պետական տեխնիկական քոքեջ	8 սմ բարձրությամբ շեմք
31	55	Ղանդիլյան փողոց 1, փակուղի 1	Ա. Տիգրանյանի անվան թիվ 3 երաժշտական դպրոց	Կան գորգեր
31	30	Մ,Մկրտչյան 2	ՊԾՀ -ի Գյումրու մասնաճյուղ	Բարձր շեմք
31	42	Ալեք Մանուկյան 4	Թիվ 7 հիմնական դպրոց	Աստիճաններ, սակայն կա շարժական թեքաճարթակ
31	11	Չարենցի12	Ֆոտոն վարժարան	Բարձր շեմք
31	25	Տերյան 58	Բռնցքամարտի մանկապատանեկան մարզադպրոց	Բարձր շեմքով դուռ
31	14	Մուշ-2 թաղամաս	Թիվ23 միջնակարգ դպրոց	Աստիճաններ
31	43	Շիրազի 3	Պետական բժշկական քոքեջ	Բարձր շեմքով դուռ
31	16	Մուշ-2 թաղամաս	Թիվ 23միջնակարգ դպրոց	Աստիճաններ
31	41	Ռուսթավելու 3	Շերամի անվան թիվ 5 երաժշտական դպրոց	Աստիճաններ, բարձր շեմքով դուռ

Կառույցներ, որոնք ըստ մշտադիտարկման չեն համապատասխանում մատչելիության չափորոշիչներին և պետք է փոխել:

ՏԸՀ	Տ Հ	Կառույց	Հիմնավորում
31	21	Թիվ 4-րդ հիմնական դպրոց	Ընտրական տեղամասը դպրոցի հիմնական շենքի մեջ չէ, այլ բակի մեջ գտնվող այլ կառույց է, որը շատ վատ վիճակի է: Տեղամասը ունի աստիճաններ 20սմ բարձրության, թեքահարթակ չունի և պլանավորած էլ չէ կառուցել: Սանհանգույց առկա չէ:
31	53	Գյումրվա բաղնիք	Կառույցը աստիճանների բարձրությունը 56 սմ է, թեքահարթակ չունի և պլանավորած էլ չէ կառուցել: Մուտքի դուռը միափեղք է 72 սմ, շեմքի բարձրությունը 7 սմ: Քվեասենյակի դռան շեմքի բարձրություն 7սմ իսկ սանհանգույցի չափորոշիչները չի համապատասխանում մատչելիությանը:
31	16	Թիվ 23 միջնակարգ դպրոց	Մուտքի աստիճանների բարձրությունը 34 սմ է, թեքահարթակ չունի և պլանավորած էլ չէ կառուցել, շեմքի բարձրությունը 7 սմ: Առկա չէ սանհագույց: Քվեասենյակը գնտվում է նկուղային հարկում, որտեղ հասնելը առկա է 13 աստիճան, դուռը միափեղք է և ունի 68 սմ լայնություն: *Մինչ զեկույցի վերջնականացումը ԿԸՀ-ի կողմից տեղափոխվել է Մուշ զարգացման հիմնադրամ:*
31	12	Թիվ 43 հիմնական դպրոց	Քվեասենյակը շատ փոքր է, ընդամենը 17 քմ: Մուտքի աստիճանների բարձրությունը 70 սմ է, թեքահարթակ չունի և պլանավորած էլ չէ կառուցել, շեմքի բարձրությունը 7 սմ և սանհանգույցի բացակայություն:

31	78	Բռնցքամարտի մանկապատանեկան մարզադպրոց	Մուտքի աստիճանների բարձրությունը 40 սմ է, թեքահարթակ չունի և պլանավորած էլ չէ կառուցել, շեմքի բարձրությունը 7 սմ: Քվեասենյակի դուռը միափեղք է և ունի 62 սմ լայնություն, շեմքի բարձրությունը 7սմ:
31	34	Ժպիտ մանկապարտեզ	Մուտքի աստիճանների բարձրությունը 32 սմ է, թեքահարթակ չունի և պլանավորած էլ չէ կառուցել, դուռը միափեղք է և ունի 79 սմ լայնություն իսկ շեմքի բարձրությունը 20 սմ: Քվեասենյակի շեմքի բարձրությունը 25 սմ և սանհանգույցը մատչելի չէ: Սակայն կառույցը ունի այլընտրանքային մուտք, որը կարող է օգտագործվել որպես ընտրատարածք:
31	80	Արթուր Ալեքսանյանի անվան հունա-հռոմեական ըմբշամարտի մանկապատանեկան մարզադպրոցի շենք	Մինչև ընտրատեղամաս հասնելը առկա է խոչընդոտներով ճանապարհ, որը հաղթահարելը դժվար կամ անհնարին է հաշմանդամություն ունեցող անձի համար: Մուտքի աստիճանների բարձրությունը 20 սմ է, թեքահարթակ չունի և պլանավորած էլ չէ կառուցել, սակայն ունի ժամանակավոր թեքահարթակ, որը չի համապատասխանում մատչելիության չափորոշիչներին: Քվեասենյակի շեմքի բարձրությունը 8 սմ, դուռը միափեղք 76 սմ և սանհանգույցը մատչելի չէ: *Մինչ զեկույցի վերջնականացումը ԿՀՀ-ի կողմից տեղափոխվել է թիվ 28 հիմնական դպրոց:*

ԿԱՊ ՄԵԶ ՀԵՏ

+374 77 043042

info@agatengo.org

ք.Գյումրի, Զամբուլի 8/5, 3104

www.agatengo.org